

«ՄԱՏԵՆԱՂԱՐԱՆ» ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ 2023-2028 ԹԹ. ԾՐԱԳԻՐ

Նախարան

Մատենադարանը որպես գիտահետազոտական հաստատություն ստեղծվել է 1959 թ. մարտի 3-ին Խորհրդային Հայաստանի կառավարության որոշմամբ որպես Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր **Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ «Մատենադարան»**, իսկ 1962 թ. անվանակոչվել է Մեսրոպ Մաշտոցի անունով: Անցած 64 տարվա ընթացքում Մատենադարանը վեր է ածվել միջազգային լայն ճանաչում ունեցող խոշոր գիտական կենտրոնի, որի հնարավորությունները հատկապես մեծացել են 2011 թ. նորակառույց գիտական մասնաշենքի շահագործման հանձնումից հետո:

Ստեղծման օրից մինչև այժմ Մատենադարանի գործունեության առաջնահերթություններն են ձեռագրերի պահպանությունը, խնամքը, վերականգնումը, ցուցակագրումը և բազմակողմանի ուսումնասիրությունը, մատենագրական, պատմագիտական և միջնադարյան գիտության, մշակույթի ու արվեստի տարբեր բնագավառների վերաբերյալ հարուստ նյութերի հետազոտությունը և հրատարակությունը:

Արդի պայմանները հնարավորություն են տալիս ավելի ընդարձակելու Մատենադարանի գործունեության ոլորտը, միջազգային կապերը, խորացնելու և ավելի արդյունավետ դարձնելու կատարվող հետազոտությունները, հիմնարար գիտությանը զուգահեռ իրականացնելու գիտագործնական ծրագրեր, տեխնիկական վերազինում, հանրահռչակման միջոցառումներ և այլն:

Սույն ծրագիրը կազմել ենք ոչ միայն Մատենադարանի գործունեության մասին տեսական պատկերացումներից ելնելով, այլև հաստատության գիտական և վարչական ղեկավարման մեր փորձառության հիմքի վրա, իրատեսորեն գնահատելով առկա նյութական միջոցները, մարդկային ու գիտական ներուժը և զարգացման հնարավորությունները:

Ծրագրի գերակայություններ (անվտանգության միջոցառումներ)

Ներկա պահին համաշխարհային քաղաքական իրավիճակը և մեր տարածաշրջանի աշխարհաքաղաքական լարված իրադրությունը ստիպում են Մատենադարանում կատարվող աշխատանքների մեջ առաջնահերթություն համարել անվտանգության միջոցառումները, մասնավորապես ստորգետնյա պահեստարանների կարգի բերումը և դրանց համապատասխանեցումը ձեռագրերի պահպանության պահանջներին (եթե պատերազմի դեպքում հարկ լինի ձեռագրերը տեղափոխել այդ պահեստարանները): Խնդիրն այն է, որ դեռևս 1960-70-ական թվականներին Մատենադարանի շենքի հարակից՝ Ժայռի մեջ փորված պահեստարանները (մատենադարանցիներն այն անվանում են թունել), ի սկզբանե հնարավոր չի եղել գերծ պահել ստորգետնյա ջրերի առաջացրած խոնավությունից, որի պատճառով դրանք չեն օգտագործվել և Ժամանակի ընթացքում վեր էին ածվել երկրորդական կամ ավելորդ իրերի կուտակման վայրի: Շուրջ երեք ամիս առաջ նախաձեռնվեց այդ տարածքների մաքրումը Մատենադարանի աշխատակիցների ուժերով: Սակայն խոնավության վերացման համար անհրաժեշտ են մասնագիտացված կառույցների ներգրավում և որոշակի ներդրումներ:

Առաջնային ենք համարում մոտակա ամիսներին (հնարավորության դեպքում՝ մինչև տարեվերջ), Մատենադարանի ստորգետնյա պահեստարաններում այնպիսի պայմանների ստեղծումը, որպեսզի լուրջ վտանգի դեպքում հնարավոր լինի ձեռագրերն ու արխիվը էվակուացնել և անվնաս պահել այդ պահեստարաններում: Ավելացնենք, որ այդ ստորգետնյա հատվածը նախատեսված է նաև Մատենադարանի աշխատակազմի էվակուացիայի համար:

Հաջորդ խնդիրը վերաբերում է Մատենադարանի շենքի **տեսահսկման համակարգի** արդիականացմանը: Այժմյան տեսահսկման սարքերը հնացած են, պատկերի թույլ տեսանելիությամբ, միաժամանակ, շենքի որոշ կարևոր հատվածներում դրանք բացակայում են: Այս պահին հանձնարարական է տրված վերջին թողարկման սարքերով ամբողջովին արդիականացնել Մատենադարանի տեսահսկման համակարգը և տեսախցիկներ ավելացնել համապատասխան վայրերում:

Երրորդ կարևոր խնդիրը, որը կապված է անվտանգության հետ, դա Մատենադարանի ձեռագրերի թվայնացված օրինակների պահպանությունն է Մատենադարանի շենքից դուրս, մեկ այլ ապահով վայրում: Ձեռագրերի թվայնացման գործընթացի առաջին իսկ օրից նկատի է առնվել, որ այդ աշխատանքը ոչ միայն ձեռագրերի ուսումնասիրության արդյունավետության համար է, այլև անվտանգային նշանակություն ունի: Խոսքն այն մասին է, որ տեսականորեն ֆորս մաժորային իրավիճակում, պատերազմի դեպքում հնարավոր է շենքի ուրբահարում անդառնալի հետևանքներով, ուստի ձեռագրերի առնվազն թվային օրինակները պետք է մեկ այլ ապահով վայրում գտնվեն: Այժմ ն՛ ձեռագրերը, ն՛ թվային օրինակները նույն շենքում են: Այս պահին հանձնարարական է տրված ձեռք բերելու մեծ տարողականությամբ և համեմատաբար ոչ մեծ չափեր ունեցող կրիչ, որի մեջ կարող են տեղավորվել մինչև այժմ թվայնացված բոլոր ձեռագրերի օրինակները (հայերեն ձեռագրերի հավաքածուի շուրջ կեսը): Հաջորդ քայլը պետք է լինի դիմումը ԿԳՄՍ նախարարին, որպեսզի ՀՀ կառավարության աջակցությամբ Մատենադարանի ձեռագրերի ցայժմ թվայնացված օրինակներով կրիչը ապահով տեղում պահվի: Միաժամանակ, անհրաժեշտ է արագացնել մնացած ձեռագրերի թվայնացումը:

Ձեռագրերի պահպանություն

Մատենադարանում Ձեռագրատանը գտնվող ձեռագրերի պահպանությունը պատշաճ մակարդակի վրա է, սակայն անհրաժեշտ է վերականգնողների մասնակցությամբ իրականացնել ողջ հավաքածուի (հայերեն և այլալեզու ձեռագրերի) մշտադիտարկում և պարզել առաջնային նորոգման կարիք ունեցող ձեռագրերի թիվը:

Մինչև այժմ, հասկանալի պատճառով, առաջին հերթին նորոգվել են հայերեն ձեռագրերը, սակայն դրան զուգահեռ նորոգման կարիք ունեն նաև օտարալեզու, մասնավորապես՝ արաբատառ ձեռագրերի հավաքածուն, որն իր մեծությամբ երկրորդն է Մատենադարանի ձեռագրական հավաքածուների մեջ: Այդ ձեռագրերի նորոգումը զգալիորեն տարբերվում է հայկական ձեռագրերի նորոգումից և պահանջում է մասնագետների վերապատրաստում, հրավիրյալ մասնագետների վարպետաց դասերի կազմակերպում, որը մասամբ արվել է մինչև այժմ (օրինակ, կազմերի լաքապատման տեխնիկայի յուրացումը): Արաբատառ ձեռագրերի

նորոգումը կարելի է կազմակերպել արաբական երկրների համապատասխան հաստատությունների հետ համագործակցությամբ:

Ձեռագրատանն առկա են նաև այլ ընթացիկ խնդիրներ: Դրանցից մեկը, որոշ դեպքերում կոշտ կամ մետաղական կրկնակազմով ձեռագրերի համար առանձին տուփերի պատրաստման հարցն է: Քանի որ ձեռագրերը դրված են գրադարակներում՝ կողք-կողքի, կարող են վնասել կից դրված ձեռագրերի կազմերը: Տուփերի մեջ դրվելով դրանք ավելի ապահով և անվնաս կլինեն:

Հատուկ ուշադրություն են պահանջում այն ձեռագրերը, որոնք գտնվում են ցուցասրահներում՝ ցուցափեղկերում: Վերականգնման բաժինը պետք է պարբերաբար կատարի դրանց վիճակի մշտադիտարկում, հարկ եղած դեպքում, վերականգնողների առաջարկությամբ ցուցանմուշ ձեռագրերը պետք է փոխարինվեն այլ համարժեք մատյաններով, իսկ ավելի նախընտրելի է՝ ձեռագրերի մակետներով:

Վերականգնում

Մատենադարանի վերականգնման բաժինը հաստատության առավել կայացած ստորաբաժանումներից է, որը մասնագիտացել է մագաղաթի, թղթի, թանաքների ու ներկերի, ձեռագրական բազմազան նյութերով կազմերի նորոգման, ախտահանիչ նյութերի ստեղծման ու կիրառման բնագավառներում: Սակայն վերականգնման բաժինը ժամանակակից սարքավորումների ձեռքբերման և կենսաբանական լաբորատորիայի վերազինման կարիք ունի, որը պետք է իրականացվի հնարավորինս կարճ ժամկետում:

Առաջիկա տարիներին վերականգնման բաժինը նախատեսում է աշխատանքներ տանել մի շարք ուղղություններով՝ շարունակել հակասնկային բաղադրանյութերի ստեղծման աշխատանքները և զարգացնել նշված նյութերի հատկությունների ուսումնասիրությունը, միջնադարյան թղթերի ծերացման ուսումնասիրությունը և նոր կանխարգելիչ նյութերի որոնումը, միջնադարյան ներկերի և պիգմենտների կառուցվածքի վերլուծությունը:

Մատենադարանի վերականգնման բաժինը մեծ նպաստ է բերել և առաջիկայում, հնարավորության դեպքում, ավելին կկարողանա անել հայերեն ձեռագրերի արտերկրի հավաքածուներում գտնվող ձեռագրերի նորոգման, ինչպես

նան տեղերում իրականացվող վերականգնման աշխատանքների համակարգման ուղղությամբ: Այդպիսի շարունակական համագործակցություն է հաստատված Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի և Զմմառի վանքի (Լիբանան) հետ, իսկ առաջիկա աշնանը մեր վերականգնողները կիրականացնեն Ամերիկայի հայկական թանգարանի (Բոստոն) մի շարք ձեռագրերի նորոգումը:

Վերականգնման բաժինը նաև միջազգային համագործակցության փորձ և հեռանկարներ ունի: Այդ շարունակական համագործակցության հասցեներն են՝ Հռոմի «Պաթուլոջիա դի լիբրո» ինստիտուտը, Բեռլինի ազգային գրադարանը, Իրաքի Էրբիլ քաղաքի Ձեռագրերի թվայնացման կենտրոնը: Մեր վերականգնողները մասնակցել են միջազգային սեմինար-պարապմունքների և կոնֆերանսների, նման միջոցառումներ կազմակերպվել են և առաջիկայում էլ կկազմակերպվեն նաև Մատենադարանում:

Մեր վերականգնման բաժինը նաև Հայաստանում այս մասնագիտության կրողների համախմբման նախաձեռնողներից է, պատահական չէ, որ 2022-23 թթ. հենց Մատենադարանում բացվեց «Վերականգնումը Հայաստանում» ուշագրավ ցուցահանդեսը, իսկ շուրջ մեկ ամիս առաջ (հունիսի 2-ին) Մատենադարանում տեղի ունեցավ «Հայաստանի վերականգնողների ասոցիացիա» հասարակական կազմակերպության հիմնադիր ժողովը:

Գիտական աշխատանք

Մատենադարանի աշխատակազմի ամենախոշոր հատվածը կազմում են գիտաշխատողները: Ինը գիտական բաժիններում ընդգրկված են 120-ից ավելի գիտաշխատողներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր հետազոտական թեման, պայմանագրային գիտական առաջադրանքը: Հասկանալի է, որ այս ամենի մասին թեկուզ շատ համառոտ նշումն առնվազն այս ծրագրի ծավալին հավասար էջաքանակ է ենթադրում, ուստի մենք այստեղ բազմաթիվ մանրամասներ զանց կառնենք՝ շեշտը դնելով գործունեության հիմնական ոլորտների վրա:

Ավելացնենք միայն, որ այս պահին հրատարակության է հանձնված «Մատենադարանի աշխատակիցների գիտական աշխատությունների 2017-2022 թթ. մատենագիտությունը», որը 1000-ից ավելի հրատարակություն է ընդգրկում և ամբողջական պատ-

կերացում է տալիս վերջին տարիներին Մատենադարանում իրականացված գիտական բազմապիսի ուսումնասիրությունների արդյունք հանդիսացող գրքերի, ձեռագրացուցակների, ժողովածուների, հոդվածների ու գիտական հաղորդումների մասին:

Անկասկած այս տեմպը պետք է պահպանել առաջիկա հինգ տարիներին և հետագայում, սակայն նաև որոշակի տեղ տալ գիտահանրամատչելի, տեղեկատվական հրատարակություններին և մանրանկարչական ալբոմների հրատարակությանը, որոնց պահանջարկը զգացվում է:

Հրատարակություններ

ա. Ձեռագրացուցակներ

Մատենադարանի հավաքածուի ուսումնասիրման տեսակետից մեծ կարևորություն ունի «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի» մատենաշարը, որի վերջին՝ 10-րդ հատորը լույս է տեսել 2019-ին (ընդգրկում է ձեռագրերի մինչև 3400 թվահամարը):

Առաջիկայում մեր նպատակը պետք է լինի Ձեռագրագիտության բաժնի աշխատանքի առավել արդյունավետ կազմակերպումը՝ այն հաշվով, որ 2024 թվականից սկսած հնարավոր լինի տարեկան մեկ հատորի հրատարակությունը: Սա իրատեսական է այնքանով, որքանով որ 11-րդ և 12-րդ հատորների (ընդգրկում են ձեռագրերի մինչև 4000 թվահամարը) հիմնական աշխատանքն արդեն արված է, սակայն, ցավոք, գործն անավարտ է մնացել խմբագիր Գևորգ Տեր-Վարդանյանի անժամանակ մահվան պատճառով:

Հարկ է նշել, որ ինչքան էլ կարևոր է այս կոթողային մատենաշարի հրատարակությունը, սակայն այն շարունակվելու է առնվազն ևս 20-30 տարի: Մեր առաջարկն է, որպեսզի ավելի վաղ հրատարակվի **Մատենադարանի համառոտ ձեռագրացուցակի 4-րդ հատորը**: Ինչպես հայտնի է, Մատենադարանի եռահատոր համառոտ ձեռագրացուցակն ընդգրկում է հայերեն ձեռագրերի գրեթե ողջ հավաքածուն, 2007 թ. լույս տեսած 3-րդ հատորում նկարագրված վերջին մատյանը կրում է 11077 թվահամարը: Դրանից հետո Մատենադարան է մուտք գործել ևս 286 ձեռագիր (ձեռագրերի այժմյան վերջին թվահամարն է 11363): Կարծում ենք, որ արդեն

հիմա աշխատանքներ պետք է սկսվեն և 2024 թ. վերջերին հրատարակվի Մատենադարանի համառոտ ձեռագրացուցակի 4-րդ հատորը, որպեսզի ուսումնասիրողները ձեռքի տակ ունենան նաև վերոնշյալ մատյանների մասին առաջնային տեղեկություններ:

Մատենադարանում աշխատանքներ են կատարվում նաև օտարալեզու ձեռագրերի ցուցակների (կատալոգների) հրատարակման ասպարեզում: Վերջին տարիներին լույս են տեսել Մատենադարանի ձեռագիր Ղուրանների եռալեզու (հայերեն, արաբերեն, անգլերեն) կատալոգը, Մատենադարանի պարսկերեն ձեռագրերի ամբողջական կատալոգը, եբրայերեն ձեռագրերի կատալոգը Մատենադարանի արաբերեն քրիստոնեական ձեռագրերի ցուցակը և վերջապես Մատենադարանի եկեղեցասլավոներեն և ռուսերեն ձեռագրերի կատալոգը:

Օրերս կարծիքի համար էլ-փոստով Մատենադարանի գիտխորհրդի անդամներին ուղարկվեց էսթեր Պետրոսյանի կազմած Գարշունի (ասորատառ արաբերեն) ձեռագրերի կատալոգը, որը հանձն է առել հրատարակել բելգիական Peeters հայտնի հրատարակչությունը:

Տեսական ժամանակ է, որ մեր արտերկրի գործընկերների հետ համատեղ պատրաստվում են Մատենադարանի ասորերեն և վրացերեն ձեռագրերի կատալոգները: Պետք է ջանքեր գործադրել, որպեսզի դրանք հրատարակվեն առաջիկա հինգ տարվա ընթացքում:

բ. «Մատենագիրք Հայոց»

«Մատենագիրք Հայոցը» իր տեսակի մեջ բացառիկ, կոթողային մի մատենաշար է, հիմնադրված 2003 թ. Գալուստ Գյուլբենկյան հաստատության ֆինանսավորմամբ, որի նպատակն է ընդգրկել 5-18-րդ դարերի հայերենով ստեղծված ողջ ինքնուրույն գրականությունը, առաջաբաններով, քննական կամ համեմատական բնագրերով: 11-րդ հատորից սկսած «Մատենագիրք Հայոցի» հատորների պատրաստումն իր ձեռքը վերցրեց Մատենադարանը: 2018-ին և 2022-ին հրատարակվեցին մատենաշարի 21-րդ և 22-րդ հատորները (կազմող Գուրգեն Գասպարյան)՝ ամբողջովին նվիրված Ներսես Շնորհալու գրավոր ժառանգությունը: Սա շատ կարևոր էր, քանի որ այս տարի լրանում է 12-րդ դարի մեր մեծ հայրապետի ու մատենագրի մահվան 850-րդ

տարելիցը, որն ընդգրկված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2022-2023 թթ. հիշատակելի տարեթվերի ցանկում:

Մատենաշարի գիտական խորհուրդն արդեն քննարկումներ է սկսել 23-րդ հատորը կազմելու ուղղությամբ, որը նվիրված է լինելու 12-րդ դարի պատմական և ժամանակագրական երկերին, մասնավորապես՝ Սամվել Անեցու և Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրություններին և Մխիթար Անեցու Պատմությանը: Համակարգված աշխատանքի դեպքում այն հնարավոր կլինի հրատարակել 2025 թ.:

Մատենադարանը երկու ուսումնասիրողի հանձնարարել է նաև Ստեփանոս Օրբելյանի պատմության և Սմբատ Սպարապետի Տարեգրքի քննական բնագրերի կազմման աշխատանքը, որոնք կընդգրկվեն 13-րդ դարի պատմագրքերին նվիրված հատորում:

գ. Նյութեր հայ ժողովրդի պատմության (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ)

Միջնադարյան Հայոց պատմության և մշակույթի կարևոր սկզբնաղբյուր հանդիսացող հայերեն ձեռագրերի հիշատակարանների հրատարակությունը դեռ խորհրդային տարիներին իրականացել է «Նյութեր հայ ժողովրդի պատմության» մատենաշարով: Վերջին հատորը լույս էր տեսել 1988 թ.: 2018-ին՝ երեք տասնամյակի ընդմիջումից հետո հրատարակվել է մատենաշարի նոր հատոր՝ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն Ա (1301-1325 թթ.), ապա 2020-ին՝ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մասն Բ (1326-1350 թթ.) (կազմողներ, Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Ղազարոսյան):

Առաջիկայում նախատեսվում է հրատարակել 14-րդ դարի 2-րդ կեսի հիշատակարանների ևս 2 հատոր, որոնցով կամբողջանա այդ դարը:

Պատմաբանների և աղբյուրագետների համար շատ կարևոր է լինելու 16-րդ դարի հիշատակարանների հրատարակությունը, որի նյութերը տասնամյակներով հավաքել են Մատենադարանի ավագ սերնդի ներկայացուցիչներ Սամսոն Լալաֆարյանը և Արմեն Տեր-Ստեփանյանը, սակայն գործը հրատարակության չի հասել: Այժմ այն՝ 2 հատորով, հրատարակության է պատրաստում Խաչիկ Հարությունյանը, նախատեսվում է տպագրել 2024-2026 թթ.: Պետք է ընդգծել, որ 16-րդ դարը սկզբնաղբյուրների առումով ամլության մի շրջան է եղել, պատմիչներ չունենք,

ուստի հիշատակարաններն այդ ժամանակաշրջանի համար չափազանց կարևոր պատմական աղբյուր են հանդիսանում:

դ. «Ցուցակ Կաթողիկոսական դիւանի»

2022 թ. հիմնադրված նոր մատենաշարը հրատարակվելու է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հետ համատեղ: Մատենադարանի արխիվի և արխիվագիտության բաժնի աշխատակիցների ջանադիր աշխատանքի շնորհիվ 2023 թ. լույս կտեսնի «Ցուցակ Կաթողիկոսական դիւանի Մաշտոցի անուան Մատենադարանի արխիվի» մատենաշարի Ա հատորը, համապատասխան ցանկերով, որը շուրջ 40 մեծածավալ հատորներից առաջինն է լինելու: Գիրքը շուտով տպարան կիջնի: Նախատեսվում է յուրաքանչյուր 2 տարին մեկ հատոր հրատարակել:

ե. Այլ հրատարակություններ

Մատենադարանում իրականացվում են նաև այլ մատենաշարային հրատարակություններ՝ ինչպես «Տնտեսական պատմության վավերագրերը», որի վերջին հրատարակությունը կաթողիկոս Սիմեոն Երևանցի, «Ջամբոն» էր (2022):

2023 թ. Արխիվային բաժինը սկսել է «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թեմերը» խորագրով՝ արխիվային նյութեր ընդգրկող, նոր մատենաշարի ստեղծման աշխատանքները, որի առաջին հատորը նվիրված է հրատապ խնդրի՝ լույս կտեսնի «Արցախի թեմ» խորագրով (բնագրերի հրատարակություն):

«Դիվան Հայոց Պատմության» Նոր շարք մատենաշարով լույս տեսած երկու հատորները վերաբերում են Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի գրավոր ժառանգությանը, որոնք կազմել էր Մատենադարանի երկարամյա աշխատակից, փոխտնօրեն Վարդան Գրիգորյանը: Նա չհասցրեց ավարտին հասցնել 3-րդ հատորը, որով պիտի ամբողջանար Ղուկաս Կարնեցու ողջ ժառանգությունը: Մատենադարանի ղեկավարության հանձնարարությամբ Արսեն Հարությունյանը սույն հատորը ավարտին է հասցրել և մոտ օրերս կավարտվի գրքի տպագրությունը:

Մատենաշարային հրատարակություններից բացի լինելու են այլ կարևոր աշխատությունների հրատարակություններ: 2024-ին առաջին անգամ ամբողջական

հայերեն թարգմանությամբ լույս կտեսնի Հեթում Պատմիչ Կոռիկոսցու՝ 1307 թ. հին ֆրանսերենով գրված «**Օադիկ պատմությանց Արևելից աշխարհի**» արժեքավոր երկը:

Հաջորդ տարի հրատարակության կներկայացվի Մատենադարանի նահապետներից՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանի գլխավորությամբ և երկու գիտաշխատողի մասնակցությամբ կազմվող «**Ուշ միջնադարյան հայկական մանրանկարչությունը**» ալբոմ-ուսումնասիրությունը, որը մասնագետներին և արվեստասեր լայն հանրությանը կներկայացնի հայ մանրանկարչության այդ սակավ ուսումնասիրված շրջանի ինքնատիպ արվեստը:

Այս տարի հրատարակության կներկայացվեն նաև հայ արվեստաբանության ու ձեռագրագիտության հիմնադիրներից մեկին՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Հովսեփյանին նվիրված փաստաթղթերի ժողովածուի 1-ին հատորը (2024-2026 թթ. ընթացքում նախատեսվում է հրատարակել ժողովածուի 2-րդ և 3-րդ հատորները), Մատենադարանի երախտավորներից բանասիրության դոկտոր Գևորգ Աբգարյանի աշխատությունների ժողովածուն, հայ վանականության կենցաղավարությանը նվիրված եռամաս աշխատության առաջին մասը, ալբոմ ուսումնասիրություն՝ նվիրված մանրանկարիչ Զաքարիա Ավանցուն և բազմաթիվ այլ աշխատություններ: Վստահաբար կարելի է ասել, որ հաջորդ հինգ տարիների հրատարակչական հունձքը նույնպես հարուստ է լինելու:

զ. Գիտահանրամատչելի հրատարակություններ

Մատենադարանի բնագրային հրատարակությունները հիմնականում գրաբերով են, և դրանք հասանելի են մասնագետներին, սակայն ոչ լայն հասարակությանը: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ առաջիկայում Մատենադարանում կարելի է ստեղծել գրաբարից աշխարհաբարի փոխադրության թարգմանական խումբ և առաջնահերթությունների ծրագիր կազմելով որոշակի հաջորդականությամբ թարգմանություններ և հրատարակություններ իրականացնել: Նախկինում այս գործով զբաղվում էին նաև այլ կառույցներ՝ պետական հրատարակչություններ, ԵՊՀ-ն, սակայն այժմ ոլորտը ուշադրությունից դուրս է մնացել է: Խոսուն օրինակ է Ներսես Շնորհալու ժառանգությունը, որն ամբողջությամբ հրատարակվեց գրաբարով, բայց որին շատերն այդպես էլ անհաղորդ մնացին: Կարելի

է առաջիկայում հենց Ներսես Շնորհալու երկերից մի հատընտիր ժողովածու պատրաստել և հրատարակել աշխարհաբարով:

Նախորդ մի քանի տարիներին (հատկապես 44-օրյա պատերազմից հետո) մեծ ուշադրություն է հատկացվել ՀՀ սահմաններից դուրս գտնվող և ոչնչացման կամ աղավաղման վտանգի տակ հայտնված մշակութային ժառանգության ուսումնասիրմանն ու հանրահռչակմանը: 2022 թ. ՀԲԸՄ դրամաշնորհով և Մատենադարանի մասնագետների ուժերով անգլերենով հրատարակվեց «**Արցախի և Ուտիքի ձեռագրական ժառանգությունը**» պատկերագիրք ուսումնասիրությունը նախատեսված լայն հանրության համար: Գրքում զետեղված են նաև շուրջ 100 գունավոր պատկերներ և գրչության կենտրոնների քարտեզ: Այդ գիրքը ԿԳՄՄՆ ֆինանսավորմամբ լույս տեսավ նաև ֆրանսերեն թարգմանությամբ (երկուսի թվային օրինակներն էլ բաց հասանելիությամբ դրված են Մատենադարանի կայքում):

Առաջիկա հինգ տարիների համար նախատեսվում է շարունակել աշխատանքներն այս ուղղությամբ: Մասնավորապես, արդեն հանձնարարություն է տրված նույն սկզբունքով կազմել Նախիջևանի երկրամասի ձեռագրական ժառանգությանը նվիրված պատկերագիրք ուսումնասիրություն, և այն թարգմանել եվրոպական տարբեր լեզուներով: Նախատեսում ենք նմանատիպ մի հրատարակություն էլ նվիրել Սյունիքին: Այսպիսով մի քանի տարի անց կունենանք Պատմական Հայաստանի՝ Արաքսից մինչև Կուր ձգվող երկրամասերի՝ Նախիջևան-Սյունիք-Արցախ-Ուտիք հայկական ձեռագրական ժառանգությունը համակողմանի ներկայացնող պատկերագիրք ուսումնասիրություններ, որոնք կունենան թե գիտական, թե հանրամատչելի նշանակություն, նաև զգալի աջակցող նյութեր կտրամադրեն քարոզչական պայքարում ազգային մշակույթի դիրքերի պաշտպանության հարցում:

Այժմ ընթացքի մեջ է Մատենադարանին նվիրված գիտահանրամատչելի ծավալուն հատորի պատրաստումը մեր մի խումբ գիտաաշխատողների մասնակցությամբ, որը հրատարակելու է ռուսաստանյան հայտնի ՍԼՕՎՕ հրատարակչությունը, աշխարհի հայտնի թանգարաններին նվիրված իր շարքում: Պատկերագիրքը հրատարակվելու է ռուսերեն և հայերեն տարբերակներով:

Գիտահանրամատչելի հրատարակություններ են նվիրվելու Մատենադարանի ցուցադրությանը, առանձին մանրանկարիչներին և մանրանկարչական դպրոցներին, որոնք հրատարակվելու են տարբեր լեզուներով:

Մատենադարանի վերը նշված հրատարակությունների հիմնական մասը ժամանակին և պատշաճ որակով իրականացվում է **հրատարակչական բաժնի** համակարգված աշխատանքի շնորհիվ:

«Բանբեր Մատենադարանի» պարբերականը և

“Matenadaran: Medieval and Early Modern Armenian studies”

Մատենադարանի գիտական պարբերականը 82 տարվա պատմություն ունի (առաջին երկու համարները կրում են «Գիտական նյութերի ժողովածու» անվանումը (1941 և 1950 թթ.): Սկսած 3-րդ համարից (1956 թ.) մինչև օրս այն լույս է տեսնում «Բանբեր Մատենադարանի» անունով: Մինչև 2017 թ. լույս է տեսել հանդեսի 24 համար, 2018 թվականից սկսած այն հրատարակվում է տարեկան երկու համար պարբերականությամբ, որի շնորհիվ վերջին հինգ տարում լույս է տեսել 10 համար (վերջինը՝ համար 34, 2022 թ.): «Բանբերի» պարբերականության մեծացմամբ Մատենադարանի աշխատակիցներն իրենց գիտական հոդվածները հրատարակելու ավելի լայն հնարավորություն ունեն:

Առաջիկայում, հաշվի առնելով արդի գիտության պահանջները Մատենադարանում հրատարակվելու է ևս մի պարբերական՝ զետեղելով գրախոսվող հոդվածներ անգլերենով և եվրոպական այլ լեզուներով, որը կոչվում է **“Matenadaran: Medieval and Early Modern Armenian studies”** (կարճ՝ MEMAS). Նման պարբերականի հրատարակության նպատակներից մեկը **Scopus** համակարգում ընդգրկված գիտական պարբերական ունենալն է, որը կնպաստի թե Մատենադարանի գիտաշխատողների և թե Հայաստանի այլ հայազետ-միջնադարագետների հոդվածները հենց Հայաստանում հրատարակելուն և համաշխարհային գիտական ցանցերում ճանաչելի լինելու հնարավորություն կստեղծի:

Արդեն կազմված է Խմբագրական խորհուրդը, որի մեջ մտնում են Հայաստանի և արտերկրի անվանի հայագետներ, հստակեցված են հրատարակվող հոդվածների չափանիշները (դրանք զետեղված են կայքում): Այն հրատարակվելու է տարեկան երկու անգամ: Խմբագրության համար համապատասխան տեղ է առանձնացվել

գիտական մասնաշենքի 4-րդ հարկում: Հավաքվում են առաջին համարի հոդվածները, հավանական է, որ հրատարակությունը սկսվի 2024 թվականից: Խմբագրությունը համագործակցում է Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցության (AIEA) հետ:

Նպատակ ունենք MEMAS-ի խմբագրության շուրջն առաջիկայում ձևավորել նաև թարգմանչական խումբ, որը կգրադվի ոչ միայն պարբերականի հոդվածների, այլև հայկական բնագրերի և ուսումնասիրությունների անգլերեն թարգմանության և հրատարակության նախապատրաստելու աշխատանքներով:

Թվայնացում

Մատենադարանի ֆոնդերի՝ առաջին հերթին ձեռագրերի թվայնացումը, առաջնային կարևորության գործ է: Արդեն շուրջ մեկ տասնամյակ Մատենադարանի ընթերցասարահում ձեռագրերի սպասարկումը կատարվում է դրանց թվային օրինակների տրամադրմամբ: Թվայնացումը սկսվել է **հայերեն ձեռագրերի հավաքածուից**, ըստ ձեռագրերի թվահամարների աճի: Սակայն եթե լինում է բարձր թվահամարի ձեռագրի պատվեր, այն թվայնացվում է արտահերթ: Այս հանգամանքը ևս հաշվի առնելով կարելի է ասել, որ մինչև այժմ թվայնացվել է հայերեն ձեռագրերի հավաքածուի շուրջ կեսը:

Հարկավոր է խնդիր դնել, որպեսզի **առաջիկա հինգ տարում** հայերեն ձեռագրերի հավաքածուն ամբողջովին թվայնացվի: Անհրաժեշտ է համապատասխան հաշվարկ կատարել, և եթե այդ նպատակի համար պետք է տեխնիկական միջոցների և մասնագետների թվի աճ, ապա պետք է գնալ այդ քայլին, քանի որ հավաքածուի թվայնացումը Մատենադարանի համար ռազմավարական նշանակություն ունի:

Պետք է նկատի ունենալ, որ թվայնացման կարիք ունեն նաև Մատենադարանի այլալեզու ձեռագրերը, որոնց ընդհանուր թիվը գրեթե հավասար է հայերեն ձեռագրերի թվին, ինչպես նաև մեծածավալ (հարյուր հազարավոր միավորներ պարունակող) արխիվային ֆոնդը: Այս վերջիններից ևս այժմ կատարվում է թվայնացում, այն դեպքերում, երբ դրանց համապատասխան միավորի վերաբերյալ սպասարկման պատվեր է ստացվում: Ըստ այդմ, ցայժմ թվայնացված այլալեզու ձեռագրերը և արխիվային նյութերը բավականին փոքր թիվ են կազմում:

Կրկնագրերի ուսումնասիրություն

Ձեռագրագիտական ուսումնասիրության չափազանց հետաքրքիր ուղղություն է կրկնագիր (պալիմպեստ) մատյանների ուսումնասիրությունը, որը նոր է սկսվել և կատարվում է գերմանացի հետազոտող՝ Համբուրգի համալսարանի պրոֆեսոր Յոսթ Գիպպերտի հետ համագործակցությամբ (վերջինս կրկնագրերի վերծանության հարուստ փորձ ունի, նախկինում ղեկավարել է Սինայի սուրբ Կատարինեի մենաստանում հայտնաբերված նմանատիպ մատյանները հետազոտող խմբի աշխատանքը): Առայժմ հիմնական աշխատանքը տարվում է ձեռագրերում կրկնագիր էջերի հայտնաբերման և Մատենադարանի թվայնացման բաժնում դրանց բազմակի լուսանկարման և դրանց համապատասխան ծրագրային մշակման ուղղությամբ, սակայն առաջիկայում կներգրավվեն նաև բնագրերի վերծանությամբ զբաղվող մասնագետները: Այս աշխատանքի արդյունքները կարող են շատ արժեքավոր լինել մինչ այժմ բանասիրությանն անհայտ կամ կորած համարվող բնագրերի կամ դրանց մասնիկների հայտնաբերման տեսանկյունից:

Գիտաժողովներ

Միջնադարյան գիտության և մշակույթի տարբեր հարցերին նվիրված գիտաժողովների կազմակերպումը Մատենադարանի գործունեության կարևոր բաղադրիչներից է: Ամենաթարմ օրինակը հունիսի 21-23-ին կայացած՝ Ներսես Շնորհալու մահվան 850-րդ տարելիցին նվիրված, «Ներսես Շնորհալի՝ բազմաշնորհ հայրապետը» խորագրով եռօրյա հայագիտական միջազգային գիտաժողովն էր, որին Հայաստանից և արտասահմանից մասնակցեց 60 զեկուցող: Միջոցառումների շրջանակում Մատենադարանում բացվեց «Ներսես Շնորհալու ժառանգությունը» խորագրով ցուցահանդես՝ 30-ից ավելի ձեռագրերի և հարակից նյութերի ցուցադրումով:

Առաջիկա հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 2-ը Մատենադարանում կազմակերպվելու է գիտաժողով՝ «Բնագիր և մեկնություն. անտիկ և միջնադարյան բնագրերի մեկնաբանման խնդիրներ» թեմայով, ՌԴ Գիտությունների ակադեմիայի Համաշխարհային գրականության ինստիտուտի և Հումանիտար հետազոտությունների դպրոցի հետ համատեղ:

Նոյեմբերի 23-25-ին կկայանա Մատենադարանի երիտասարդական 9-րդ գիտաժողովը: Մատենադարանի երիտասարդական գիտաժողովներն արդեն ավանդական են և ամենամյա, ուստի կարելի է վստահաբար ասել, որ առաջիկա 5 տարիներին նույնպես կկազմակերպվեն նման գիտաժողովներ:

Նոյեմբերի 29-դեկտեմբերի 2-ը կկայանա Ներսես Շնորհալույն նվիրված գիտաժողով Վատիկանում, որին մասնակցելու է Մատենադարանը:

Դեկտեմբերի 5-6 կազմակերպվելու են Նարեկացիական 5-րդ ընթերցումները Մատենադարանում:

Թանգարանային մաս, ցուցադրություն

Մատենադարանի հին մասնաշենքի՝ գրեթե ամբողջությամբ ցուցադրության տարածքի վերածումն անհամեմատ մեծացրել է մեր գիտահետազոտական հաստատության նաև թանգարանային դերը: Մատենադարանի այս հատվածն աստիճանաբար ստանում է իր կազմակերպչական դիմագիծը՝ թանգարանային գործունեությանը հատուկ գործառույթների և աշխատակազմի ձևավորմամբ:

Թանգարանային մասում վերջին ամիսներին իրականացվեցին երկու նշանակալից ցուցահանդեսներ, առաջինը մայիսին՝ թանգարանների միջազգային օրվա առիթով՝ Մատենադարանի պատմությանը նվիրված տպավորիչ ցուցահանդեսն էր, երկրորդը հունիսին՝ Ներսես Շնորհալու ժառանգությանը նվիրված ցուցահանդեսը: Իսկ առաջիկա նոյեմբերին Մատենադարանում կկազմակերպվի քանդակագործ Ղուկաս Չուբարյանի 100-ամյակին նվիրված ցուցահանդես:

Թանգարանային մասում մի շարք անելիքներ կան, որոնցից նշենք մի քանիսը: Ներկա ցուցափեղկերը հարմարեցված չեն ձեռագրերի ցուցադրման պահանջներին, հարկավոր է աստիճանաբար դրանք փոխարինել ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցած ցուցափեղկերով, որոնք կապահովեն բարձր անվտանգություն և պահպանման ապահովություն ձեռագրերի համար:

Կարելի է կազմակերպել Մատենադարանի գործունեությանն ու առաքելությանը համապատասխան վարպետաց դասեր, կրթական ծրագրեր (այդ փորձն արդեն առկա է) բովանդակային և տարիքային տարբերակումներով: Անհրաժեշտ է հուշանվերների ցուցադրման և վաճառքի տարածքի

վերակազմակերպում, մատենադարանյան հուշանվերների փաթեթի ստեղծում և զարգացում, ժամանակավոր ցուցադրություններն ուղեկցող փաթեթների պատրաստում:

Թանգարանային մասում առաջիկա հինգ տարիներին նախատեսվող ծրագրերից է նաև բազմալեզու աուդիոգիդերի ներմուծումը: Միաժամանակ, հարկավոր է հասնել այն բանին, որ Մատենադարանում բացվող ցուցահանդեսներն ունենան կատալոգներ կամ առնվազն բացատրական բուկլետներ:

Թանգարանային մասը կարող է նաև սեփական գործարար նախաձեռնությունների և դրամաշնորհների ներգրավման միջոցով ֆինանսական աղբյուրներ հայթայթել:

Ձեռագրերի մակետների պատրաստում

Մատենադարանի կրկնօրինակման և մակետավորման բաժինը պատրաստում է ձեռագրերի մակետներ, որոնք օգտագործվում են ինչպես բուն ցուցադրությունում, շարժական և արտագանա ցուցադրություններում, այնպես էլ Արցախի մասնաճյուղում:

Վերջին շրջանում ջանքեր են գործադրվում, որպեսզի հատկապես մշտական ցուցադրության մեջ նվազագույնի իջեցվեն բնագրերը և հնարավորին չափով ավելացվեն կրկնօրինակները: Սա պայմանավորված է բնագրերը հնարավորին չափ անվնաս պահելու մտահոգությամբ: Որքան էլ քայլեր ձեռնարկվեն ցուցասրահներում լույսի, ջերմաստիճանի և խոնավության ընդունելի պայմաններ ստեղծելու համար, միևնույն է դրանք հեռու են այն պայմաններից որպիսիք առկա են պահոցներում: Հետևաբար պատրաստվում են նոր կրկնօրինակներ և այդ գործը պետք է շարունակվի ապագայում՝ հաշվի առնելով նաև թանգարանային մասի առաջադրած պահանջները (թե հատկապես ո՞ր ձեռագրերի մակետներն են անհրաժեշտ):

Միջազգային կապերի բաժին

Միջազգային կապերի բաժինը համակարգում է Մատենադարանի միջազգային համագործակցությունը, ինչպես նաև նոր կապեր հաստատում աշխարհի տարբեր գիտական ու մշակութային հաստատությունների՝ համալսարանների,

ինստիտուտների, գրադարանների ու թանգարանների, նաև հայագիտությանն աջակցող կենտրոնների հետ՝ որոնց թվում են Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամը, Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցությունը և այլն: Բաժնի միջոցով ծրագրեր են ներկայացվել ՅՈՒՆԵՍԿՕ-ին, որի արդյունքում կազմակերպվել են մի շարք միջազգային գիտաժողովներ ու վարպետության դասեր, հրատարակվել են գրքեր: Միաժամանակ, բաժինը համակարգում է արտասահմանից ժամանած հետազոտողների, ուսանողների և կամավորների աշխատանքը Մատենադարանում:

Միջազգային կապերի բաժինն իրականացնում է Եվրամիության «Էրազմուս+» կրթական փոխանակման ծրագիրը, որի շրջանակում Մատենադարանը համագործակցում է Լուվեն լա Նեովի (Բելգիա), Բոլոնիայի (Իտալիա), Զալցբուրգի (Ավստրիա), Թեսալոնիկի Արիստոտելի (Հունաստան) համալսարանների հետ, որի արդյունքում Մատենադարանի մի շարք գիտաշխատողներ և ասպիրանտներ հնարավորություն են ստացել իրենց հետազոտությունները կատարել համագործակցող համալսարաններում, փոխադարձաբար Մատենադարանն էլ հյուրընկալել է այլազգի մասնագետների: Այս գործընթացը շարունակական է:

Մատենադարանի միջազգայնացմանն ու հանրահռչակմանը մեծապես նպաստում են նաև արտասահմանում կազմակերպված ցուցահանդեսները: Առաջիկայում Մատենադարանյան նյութերով ցուցահանդեսներ կազմակերպելու նախնական պայմանավորվածություններ են ձեռք բերվել Շվեյցարիայում ՀՀ դեսպանության և Լիոնում ՀՀ գլխավոր հյուպատոսության հետ:

Այս ամենով հանդերձ, Միջազգային կապերի բաժնի աշխատանքը ակտիվացման կարիք ունի, թերևս ոլորտին ծանոթ մասնագետների ներգրավման անհրաժեշտություն է զգացվում:

Հանրային կապերի բաժին

Մատենադարանի Հանրային կապերի բաժինը ակտիվ գործունեություն է իրականացնում ինչպես գործընկերային և տեղեկատվական, այնպես էլ հանրային դաշտում: Մատենադարանի կայքը միջին հաշվով տարեկան շուրջ 60 000 այցելու է ունենում, իսկ ֆեյսբուքյան էջը 19 հազար հետևորդ ունի:

Առաջիկա տարիների համար կարևոր խնդիր է նոր ձևավորումով, արդիական լայն ընդգրկումով և հնարավորություններով կայքի ստեղծումը:

Գիտագործնական ծրագրեր

Նկատի ունենալով, որ Մատենադարանի Բժշկագիտության բաժնի ավագ գիտաշխատող Արմեն Սահակյանը տարիներ ի վեր զբաղվում է ձեռագրերում պահպանված միջնադարյան բաղադրատոմսերով ներկերի ուսումնասիրությամբ (որոշ ներկերի համար արդեն ունենք պետական արտոնագրեր), և որ Մատենադարանում կատարվող աշխատանքների մեջ գիտակիրառական ուղղությունը փոքր մաս է կազմում, անհրաժեշտ ենք համարում ստեղծել **«Միջնադարյան բաղադրատոմսերով թանաքների և ներկերի ուսումնասիրության, պատրաստման ու կիրառման լաբորատորիա»:**

Դրա շնորհիվ Մատենադարանում կայուն հիմքի վրա կդրվի ձեռագրերում օգտագործված թանաքների և ներկերի ուսումնասիրությունը, կիրականացվի՝ **ա.** ձեռագրերում պահպանված ներկերի բաղադրատոմսերի ուսումնասիրություն (կկազմվի բաղադրատոմսերի համահավաք), **բ.** այդ բաղադրատոմսերով բնական ներկերի ու թանաքների փորձարարական պատրաստում, որով կվերականգնվեն միջնադարյան բնական ներկերի պատրաստման և կիրառման ավանդույթները, **գ.** փորձարարական եղանակով վերականգնված ներկերի համար ձեռք կբերվեն արտոնագրեր **դ.** արտոնագրված ներկերը կարող են առաջարկվել կիրառական գործածության համար, սկսած նկարչականից մինչև արդյունաբերական օգտագործում, **ե.** բնական թանաքների և ներկերի կիրառմամբ կպատրաստվեն մանրանկարների կրկնօրինակներ և այլ կարգի հուշանվերներ, որոնց վաճառքը հավելյալ ներդրում կլինի Մատենադարանի արտաբյուջեում:

Երկրորդ ծրագիրը նույնպես կապվում է Արմեն Սահակյանի կատարած ուսումնասիրությունների հետ, որը զբաղվել է նաև անուշահոտ նյութերի ստացման փորձարարական աշխատանքներով: Արդյունքում ստացված բնական եթերայուղերը օգտագործվում են ձեռագրերը ախտահանելու, իսկ թորվածքները՝ ցուցասրահների միկրոֆլորան ապահովելու նպատակով, որի համար ստացել է համապատասխան սերտիֆիկատ և արտոնագրեր:

Հարկ է նշել, որ հնում հայկական անուշաբույր յուղերը արտահանվել են Արևելքի և Արևմուտքի մի շարք երկրներ ու տեղ գտել հնագույն դեղագիտարաններում: Անտիկ մի քանի հեղինակներ իրենց երկերում անդրադարձել են Հայաստանի օծանելիքներին ու գովաբանել Հայաստանի «դրախտային» բույրերը՝ նշելով, որ դրանց պատրաստման գաղտնիքը հայտնի է եղել միայն հայերին:

Հաշվի առնելով կուտակված փորձը և արդեն ստեղծված նյութերը, կարելի է հիմնել էքսպերիմենտալ, ինտերակտիվ «Միջնադարյան բույրեր» լաբորատորիա, որտեղ Մատենադարանի այցելուները բացառիկ հնարավորություն կունենան ծանոթանալու հայկական ձեռագիր աղբյուրների հիման վրա բացահայտված, միջնադարյան բաղադրատոմսերով պատրաստված մի քանի տասնյակ անուշաբույր յուղերի և օծանելիքների պատրաստման առանձնահատկություններին: Այն կարող է տեղակայված լինել ցուցադրությանն առընթեր տարածքում, որպեսզի հեշտ լինի այցելուների մուտքը: Այն կարող է նպաստել զբոսաշրջային հոսքի ընդլայնմանը: Մուտքը դեպի «Միջնադարյան բույրեր» լաբորատորիա կարող է լինել առանձին տոմսով, որը նույնպես կհամալրի Մատենադարանի արտաբյուջեն:

Գիտագործնական նշանակություն կարող է ունենալ նաև միջնադարյան **բժշկագիտության** հետազոտումնապիրությունը և արդի բժշկության ու դեղագործության համար ընդունելի կամ նպաստավոր տվյալների շրջանառումը, դրանց կիրառման հնարավորությունների բացահայտումը: Այդ աշխատանքը պետք է իրականացվի բժշկական մասնագիտացված և գիտակրթական հաստատությունների հետ համագործակցությամբ, որի առաջին քայլերն իրականացվել են արդեն այս տարի, Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտի և Մ. Հերացու անվան բժշկական համալսարանի համապատասխան ամբիոնների հետ անցկացված քննարկումներով, և վերջինիս բարձր կուրսերի ուսանողների համար Մատենադարանում կազմակերպված դասախոսություններով:

Գրադարան և ընթերցասրահ

Մատենադարանի գրադարանը հայագիտական գրականության խոշորագույն կենտրոններից է: 2017-2022 թթ. ընթացքում գրադարանը համալրվել է 5216 միավոր հայերեն և օտար լեզուներով գրքերով: Մատենադարանի գրադարանն ակտիվ կապերի մեջ է ՀՀ խոշոր գրադարանների՝ մասնավորապես Հայաստանի ազգային

գրադարանի և ԳԱԱ հիմնարար գրադարանի հետ: Ընդամենը մեկ ամիս առաջ գործարկվեց KOHA էլեկտրոնային քարտարանի Մատենադարանի լոկալ (տեղային) ցանցը, որի միջոցով ընթերցողները կարող են տեսնել և պատվիրել այն գրքերը, որոնք կան Մատենադարանի ֆոնդում:

Գրադարանի հիմնական դժվարություններից մեկը պահոցների սահմանափակ տարածքն է: Արդեն այժմ գրքերի տեղավորման խնդիր է առաջացել: Այս ուղղությամբ անհրաժեշտ են համապատասխան քննարկումներ, որպեսզի հարցի լուծման ուղիներ գտնվեն:

Ընթերցասրահը գործունեության արդիականացմանն ուղղված որոշ միջոցառումների կարիք ունի, անհրաժեշտ է ավելացնել համակարգիչների թիվը, էլեկտրոնային քարտարանից օգտվողների գործը դյուրացնելու համար:

Գիտակազմակերպչական և այլ հարցեր

Վերջին տարիներին էականորեն մեծացել է **Մատենադարանի գիտական խորհրդի** դերը, ավելացել է նիստերի և քննարկվող հարցերի քանակը: Սովորական է դարձել քննարկման և գիտխորհրդի հաստատմանը ներկայացված աշխատությունների առաքումը գիտխորհրդի անդամներին էլ-փոստի միջոցով և դրանց վերաբերյալ առցանց քվեարկությունը: Առաջիկայում պետք է մշակվի և հաստատվի գիտխորհրդի անդամների ընտրության նոր կանոնակարգ:

Վերջին ամիսներին Մատենադարանի աշխատանքային ռիթմի ապահովման կարևոր միջոց են դարձել յուրաքանչյուր շաբաթվա առաջին աշխատանքային օրվա առավոտյան հրավիրվող **տնօրինության նիստերը**, որտեղ քննարկվում են առաջիկա շաբաթվա հիմնական անելիքները և լուծում պահանջող զանազան հարցեր, տրվում են համապատասխան հանձնարարականներ: Այդ պրակտիկան պետք է շարունակել նաև առաջիկա տարիներին:

Մատենադարանի երկու ստորաբաժանում՝ Հանրային կապերի բաժինը և Միջազգային կապերի բաժինը, էլ-փոստի ներքին ցանցով պարբերաբար Մատենադարանի աշխատակիցներին տեղեկացնում են նախատեսվող աշխատանքների, միջոցառումների, գիտաժողովների, Հայաստանի և արտերկրի գիտական և այլ կազմակերպությունների հետ համագործակցային ծրագրերի մասին:

Մատենադարանի բազմանդամ աշխատակազմի համախմբմանը նպաստող կարևոր քայլ կարող է լինել Մատենադարանի աշխատողների արհմիության գործունեության ընդլայնումը և նրա մեջ ավելի մեծ թվով աշխատակիցների ներգրավումը: Մատենադարանում պետք է անհրաժեշտ պայմաններ ստեղծվեն արհմիության գործունեության համար:

Ֆինանսական հավելյալ միջոցների ներգրավում

2021 թ. Մատենադարանում առաջին անգամ անցկացված որակավորումից (ատեստացիա) հետո, 2022 թվականից՝ ըստ համապատասխան տարակարգերի, բարձրացվեց գիտաշխատողների աշխատավարձը, որը շատ դրական քայլ է: Մակայն դրա հետ մեկտեղ առաջացավ գիտաշխատողների, որոնք կազմում են Մատենադարանի աշխատակիցների թվի մեկ երրորդը, և հիմնարկի մյուս ստորաբաժանումների (գիտատեխնիկական, սպասարկման, էքսկուրսավարների, հսկիչների, ադմինիստրացիայի և այլն) աշխատակիցների աշխատավարձերի զգալի անհամամասնություն: Այժմ այդ տարբերությունը մեղմելու համար տնօրինությունը արտաբյուջեի միջոցներից որոշ չափով պարզևավճարներ է հատկացնում ոչ գիտաշխատող աշխատակիցներին:

Մատենադարանի արտաբյուջեն ձևավորվում է հիմնականում թանգարանի տոմսերի վաճառքից, մասամբ՝ գրքերի և հուշանվերների վաճառքից, երկու դահլիճները՝ վարձակալությամբ տրամադրումից, ձեռագրերի և արխիվային նյութերի թվայնացված օրինակների վճարովի պատվերներից և նվիրատվություններից:

Առաջիկայում պետք է քայլեր ձեռնարկել արտաբյուջեի համալրման հավելյալ միջոցներ գտնելու համար, դրամաշնորհային տարբեր նախագծերի, ինչպես նաև գիտագործնական ծրագրերի իրականացման միջոցով (որոնց մասին նշվեց վերևում):

Մատենադարանի շենքի խնամք և տարածքի բարեկարգում

Մատենադարանի հսկայական մակերես զբաղեցնող երկու մասնաշենքերը, օդափոխության և այլ սարքավորումների տեխնիկական սպասարկումը, ինչպես նաև շրջակա տարածքի խնամքը, մշտական ուշադրություն և բավական մեծ միջոցներ են պահանջում:

Մատենադարանի նոր մասնաշենքի հարթ տանիքը շահագործման հենց առաջին տարվանից (2011 թ.) ունեցել է թերություններ, որոնց պատճառով ձյան հալոցքի և անձրևի պայմաններում տարեցտարի ավելի ու ավելի մեծ չափով կաթոցներ էին առաջանում շենքի 4-րդ հարկում գտնվող ընթերցասրահում և թվայնացման բաժնում: Տնօրինության դիմումներին ի պատասխան ՀՀ կառավարությունը հատկացրեց միջոցներ, որոնց շնորհիվ հնարավոր եղավ 2022 թ. նոր մասնաշենքի հարթ տանիքի՝ թերություններ ունեցող հատվածի նորոգումը: Առաջիկայում անհրաժեշտ է նորոգել նաև տանիքի մյուս հատվածները:

Կարևոր խնդիր է Մատենադարանի հին մասնաշենքի հյուսիսային և արևմտյան կողմերում գտնվող լեռնալանջի քարաժայռի ցանցապատումը, որի շնորհիվ կվերանա քարաթափության վտանգը, որը եղել է շենքի կառուցման ժամանակից ի վեր: Ի պատասխան Երևանի քաղաքապետարանին ուղղված դիմումների, նախաձեռնվել են տվյալ հատվածի ցանցապատման նախագծման և նախահաշվի պատրաստման աշխատանքները: Խոստացվել է աշխատանքներն իրականացնել առաջիկա աշնանը:

Առաջիկայում նախատեսվում է գիտական մասնաշենքի տանիքին արևային վահանակների տեղադրում, որը 1/3 չափով կնվազեցնի Մատենադարանի՝ էլեկտրաէներգիայի ծախսը: Այս ուղղությամբ այժմ բանակցություն է տարվում երեք ընկերության հետ:

Մատենադարանի «Գանձասար» մասնաճյուղը

Մատենադարանի մասնաճյուղն Արցախում՝ Գանձասարի վանքի հարևանությամբ, բացվել է 2015 թ., որի ցուցասրահներում ներկայացվել են ձեռագրերի կրկնօրինակներ, արխիվային փաստաթղթեր և հնատիպ գրքեր: 2017-2019 թթ. մասնաճյուղի այցելուների թիվը տատանվում էր տարեկան 15-18 հազարի միջև, որը շատ բարձր թիվ է Արցախի թանգարանների համար: Այստեղ կազմակերպվել են նաև ժամանակավոր ցուցահանդեսներ և գիտաժողովներ (այդ թվում միջազգային գիտաժողով՝ 2019 թ.): 2020 թ. Պատերազմի ընթացքում ցուցանմուշները դժվարությամբ, բայց բարեհաջող տեղափոխվեցին Երևան: Մատենադարանում դրանց հատկացվեց առանձին ցուցասրահ: Մասնաճյուղը ժամանակավորապես դադարեցրեց

գործունեությունը: Այնուամենայնիվ, մի քանի ամիս անց ցուցանումների մի մասը վերադարձվեց Գանձասար, մասնաճյուղը վերաբացվեց:

2022 թ. դեկտեմբերի կեսերից մասնաճյուղը կրկին փակվել է այս անգամ արդեն ճանապարհի շրջափակման պատճառով (բացվում է դեպքից դեպք՝ այցելությունների վերաբերյալ նախնական պայմանավորվածությամբ): Արցախի շրջափակման վերացումից հետո, անվտանգային երաշխավորված պայմանների դեպքում, բոլոր ցուցանումները կարելի է վերադարձնել Արցախ և լիարժեքորեն վերականգնել մասնաճյուղի գործունեությունը:

«Մատենադարանի բարեկամներ» և «Մաշտոց» բարեգործական հիմնադրամները

Մատենադարանին կից ստեղծված այս երկու բարեգործական հիմնադրամները մեծապես աջակցել և աջակցում են Մատենադարանի գործունեությանը ամենատարբեր ոլորտներում: «Մատենադարանի բարեկամները» վերջին հինգ տարում, տարբեր կազմակերպությունների և անձանց նվիրաբերած միջոցների ներգրավմամբ ֆինանսավորել է ավելի քան չորս տասնյակ մենագրությունների ու ժողովածուների հրատարակությունը, որոնց ամբողջ տպաքանակը նվիրաբերվել է Մատենադարանին: Միաժամանակ աջակցել են հակավիրուսային ծրագրերի և վերականգնման համար նյութերի ձեռքբերմանը, տարբեր գիտաժողովների կազմակերպչական աշխատանքներին և այլն:

«Մաշտոց» հիմնադրամը կազմակերպել է «100 գրչության կենտրոնների» ինտերակտիվ քարտեզի ստեղծման ծրագիրը, որի արդյունքում այժմ ցուցասրահներում տեղադրված համապատասխան վահանակների միջոցով հնարավոր է ծանոթանալ այդ գրչակենտրոնների և տեղում ստեղծված ձեռագրերի մասին տեղեկություններին (հայերեն և անգլերեն) և դրանց լուսանկարներին: Արդեն պատրաստ է նաև **Վիրտուալ շրջայց Մատենադարանում** երկլեզու ծրագիրը, որի շնորհանդեսը կլինի առաջիկայում: Բացի այդ, հիմնադրամը Մատենադարանի աշխատակիցների համար կազմակերպել է հին հունարենի և լատիներենի դասընթացներ, իրականացրել և այժմ էլ իրականացնում է մանրանկարչական կրթական ծրագիր և այլն:

Առաջիկա տարիներին երկու հիմնադրամն էլ շարունակելու են ամենասերտ գործակցությունը Մատենադարանի հետ:

Ամփոփում

Մաշտոցյան Մատենադարանը բացառիկ արժեք ունի մեր ժողովրդի կյանքում և իրավամբ համաժողովրդական սեր ու ակնածանք է վայելում: Դարերի բազում փորձություններով անցած և այստեղ վերջին հանգրվան գտած հազարավոր հայերեն ձեռագիր մատյանները ոչ միայն մշակութային անգնահատելի հուշարձաններ են, այլև մեր պատմության կենդանի վկաները: Ուստի միանգամայն բնական է, որ այս հաստատությունը գտնվում է Հայաստանի պետության հոգածության ներքո և գրեթե միշտ առանձնահատուկ ուշադրության է արժանացել: Միաժամանակ, պետք է արձանագրել, որ Մատենադարանն առաջին հերթին հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ է և նրա գործունեության մեջ գիտական և հետազոտական բաղադրիչը առաջնային նշանակություն ունի:

Ներկա ծրագիրը Մատենադարանի առաջիկա տարիների գործունեության մասին մեր տեսլականն է, հիմնված նրա հարկի ներքո՝ ձեռագրերի և դրանց հիշատակարանների, պատմագրական երկերի ու մանրանկարչական արվեստի ուսումնասիրության չորս տասնամյակների փորձառության վրա:



Կարեն Մաթևոսյան

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

07.07.2023 թ.